hospital
with a heart

WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Հ. Ներսիսյան 10/7
Երևան 0014, Հայաստան

10/7 Nersisyan street
Yerevan 0014, Armenia

www.wigmore.am
+374 12345678

ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ի ծննդօգնության ծառայությունն իրականացվում է ամբողջ ծավալով՝ հիմնվելով ապացուցահեն բժշկության վրա, ապահովելով բարձր որակ և բացառիկ բուժառուակենտրոն մոտեցում:

Մանկաբարձական հոգատար բուժանձնակազմը աշխատում է, որպեսզի յուրաքանչյուր երեխայի ծնունդ մայրիկի համար լավագույն փորձառությունը լինի:

Մեր աշխատանքի սկզբունքներն են՝

- Ապացուցահեն բժշկություն
- Բարձր որակ
- Բացառիկ բուժառուակենտրոն մոտեցում
- Հոգատար բուժանձնակազմ
- Վերջին սերնդի նորագույն սարքավորումներով հագեցվածություն
- Գործիքային և լաբորատոր հետազոտությունների ճշգրիտ իրականացում

ԲԱԺԻՆՆԵՐ

- Կանանց խորհրդատվություն
- Մանկաբարձություն
- Հղիության ախտաբանություն
- Նորածնային

ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կանանց հետազոտություն և հղիության պլանավորում,
- Բարձր և ցածր ռիսկի խմբի հղիների վարում,
- Հղիների սկրինինգային հետազոտությունների իրականացում (ՈՒԶ սկրինինգ, հեմոլիտիկ ստրեպտոկոկի որոշում քսուքում),
- Ծննդալուծում բնական ծննդաբերական ուղիներով և կեսարյան հատմամբ,
- Հետծննդյան խնամք,
- Առողջ նորածինների խնամք,
- Հիվանդ և /կամ անհաս նորածինների բուժում և խնամք,
- Վիրաբուժական խնդիրներով կամ բնածին արատներով նորածինների վիրաբուժական բուժում:

Առաջին անգամ Հայաստանում ներդրվում է LDR (Labor, Delivery, and Recovery) համակարգը, որը թույլ է տալիս ստեղծել հնարավորինս հարմարավետ պայմաններ և տրամադրող միջավայր ողջ ծննդաբերության ընթացքում:

Այս համակարգը թույլ է տալիս ծննդաբերության և հետծննդյան շրջանում ցուցաբերել լավագույն բուժօգնությունը և մշտադիտարկումը համապատասխան սարքավորումների և բուժանձնակազմի մշտական ներկայության շնորհիվ: Միևնույն ժամանակ ստեղծված են բոլոր նպաստավոր պայմանները, որպեսզի ծննդկանը իրեն զգա ընտանեկան միջավայրում:

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ՑԱՎԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ծննդաբերական ցավի կառավարումը իրականացվում է ինչպես դեղորայքային, այնպես էլ ոչ դեղորայքային մեթոդներով, մասնավորապես նաև հիդրոթերապիայի միջոցով, երբ հղի կինը, տաք ջրում ընկղմվելով, կարողանում է ֆիզիկապես ավելի լավ, հանգիստ և թուլացած զգալ:

Հղիի ցանկության և հակացուցումների բացակայության պայմաններում հնարավոր է ծննդաբերության բոլոր փուլերը կազմակերպել ջրային միջավայրում՝ համապատասխան փորձառություն ունեցող մասնագետի ուղղորդմամբ:

ՆԵՈՆԱՏԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ի նեոնատալ ծառայությունն իրականացվում է ամբողջ ծավալով:

- Նախածննդյան շրջանում հղիության ընթացքում պտղի ախտաբանությունների դեպքում մասնագիտական խորհրդատվության տրամադրում պերինատալ կոնսիլիումի շրջանակներում:
- Ծնարանում նորածինների գնահատում, խնամքի կազմակերպում և, անհրաժեշտության դեպքում, նորածնի առաջնային վերակենդանացման միջոցառումների իրականացում:
- Առողջ նորածինների վարում և հսկողություն հետծննդյան համատեղ կացության պալատներում:
- Հիվանդ և(կամ) անհաս նորածինների մոտ հիվանդությունների, ախտաբանությունների, խանգարումների, վնասվածքների և այլ հնարավոր շեղումների ախտորոշում, կանխարգելում, բուժում և խնամք նորածնային վերակենդանացման և ինտենսիվ բուժօգնության բաժանմունքում և հատուկ խնամքի (II Էտապի) ստորաբաժանում, իրականացնելով ժամանակակից բժշկության սկզբունքներն ու մեթոդները:

- Նորածնային մասնագիտացված վիրաբուժական թիմի կողմից բնածին արատներով և(կամ) այլ վիրաբուժական խնդիրներով նորածինների վիրահատական միջամտությունների իրականացում:
- Բոլոր սկրինինգների և պատվաստումների կատարում:
- Ըստ անհրաժեշտության, նեղ մասնագիտացում ունեցող բժիշկների խորհրդատվություններ տեղում:
- Ըստ անհրաժեշտության, կկատարվեն նաև գլխի, թոքերի, սրտի, որովայնի ուլտրաձայնային հետազոտություններ:
- Նորածինների արտագնա անհետաձգելի բուժօգնության տրամադրում և տեղափոխման իրականացում նորածնային ռեանիմոբիլով:
- 7/24 ձևաչափով մասնագիտական խորհրդատվության տրամադրում՝ մարզերում տեղակայված բժշկական կազմակերպություններում հիվանդ և(կամ) անհաս նորածինների բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ:
- Դուրսգրումից հետո շարունակական խորհրդատվության և հսկողության տրամադրում: